ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Մխիթար Ժորայի Գասպարյանի «ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման հիմնախնդիրները և բարելավման ուղիները» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հանրակրթության կառավարման արդի մոդելների ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն տեսական մոտեցումների բացահայտման տեսանկյունից, այլև այս հիմնախնդիրը սոցիալական և տնտեսական մեծ նշանակություն ունի: Վերջին տասնամյակներում Հայաստանի Հանրապետությունում իրականացված կրթական բարեփոխումները, կրթական հիմնարկներից պահանջվող հաշվետվողականության բարձրացումը, պետական-հանրային կառավարման սկզբունքների ներդրումը, ուսուցիչների սերնդափոխության խորացող խնդիրները, ինչպես նաև համայնքային կառավարման համակարգի փոփոխություններն առաջացրել են նոր տեսական-մեթոդաբանական և գործնական հարցադրումներ: Դպրոցների կառավարման արդյունավետության, որոշումների կայացման կառուցակարգերի թափանցիկության, կառավարչական պատասխանատվության բաշխման և օրենսդրական դաշտի իրական կիրառելիության խնդիրները դարձել են առաջնահերթ ու հրատապ:

Ուստի՝ հանրակրթության ոլորտի կառավարման հիմնախնդիրները պահանջում են նոր գիտական մոտեցումներ, խորքային վերլուծություն և հիմնավորված բարեփոխումների նախագծում:

Մասնավորապես, հանրակրթությունը առաջնային և կարևոր դեր ունի մարդկային կապիտալի ձևավորման գործում, քանի որ որքան բարձր է մարդկային կապիտալի արժեքը, այն այլ հավասար պայմաններում ավելի մեծ ՀՆԱ է ստեղծում: Այս հանգամանքը կարևոր է դառնում նաև այն պատճառով, որ Հայաստանի Հանրապետության ազգային հարստության կեսից ավելին (վերջին տվյալներով 59%-ը) կազմում է մարդկային կապիտալը: Ազգային հարստության մյուս երեք բաղադրիչների՝ արտադրական կապիտալի, բնական կապիտալի և ազգային զուտ ակտիվների մեծությունը կազմել է ընդհանուր առմամբ 48%:

Հայաստանի Հանրապետության համար հանրակրթությունը նաև այն տեղն է, որտեղ դաստիարակվում է երկրի քաղաքացին, որն ունի հայրենիքի զգացում և այդ երկրի և նրա ռեսուրսների նկատմամբ սեփականատիրոջ իրավունք և դրանից բխող պարտականություններ, որը չպետք է առաջնորդվի «որտեղ հաց, այնտեղ կաց» հայրենադավ բանաձևով:

Այս ամենը արդիական և պահանջված են դարձնում ատենախոսի հետազոտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական **նպատակն է**՝ բազմակողմանի ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի Հանրապետության հանրակրթության ոլորտում կառավարման արդի հիմնախնդիրները, բացահայտել դրանց առաջացման պատճառահետևանքային կառուցակարգերը, հասկանալ կառավարման ինստիտուցիոնալ և օրենսդրական առանձնահատկությունները, համակարգել միջազգային առաջատար փորձը և առաջարկել հանրակրթության կառավարման բարեփոխման հիմնավորված, գործնական և տվյալահեն ուղիներ:

Հետազոտության նպատակից բխում են ատենախոսի **առաջադրված խնդիրները**, որոնք հետևյալն են.

- վերլուծել հանրակրթության դերը հանրային կառավարման համակարգում, բացահայտել դրա սոցիալ-քաղաքակրթական նշանակությունը և կապը պետության զարգացման ռազմավարական առաջնահերթությունների հետ,
- ուսումնասիրել հանրակրթության կառավարման տեսական հիմքերը, դրանց մեթոդաբանական առանձնահատկությունները և միջազգային գիտական դաշտում ձևավորված մոտեցումները,
- կատարել հանրակրթության կառավարման միջազգային փորձի համեմատական վերլուծություն, տարբեր երկրների օրինակով ընդգծել կառավարման մոդելների առավելություններն ու սահմանափակումները,
- բացահայտել ՀՀ հանրակրթության համակարգի զարգացման առանձնահատկությունները՝ ներառյալ կառավարման ինստիտուցիոնալ կառուցվածքը, օրենսդրական հիմքերը, կրթական քաղաքականությունը, մարդկային ռեսուրսների դերը և ենթակառուցվածքների զարգացումը,
- բացահայտել ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման հիմնական հիմնախնդիրները և դրանց պատճառահետևանքային շղթան, գնահատել դրանց ազդեցությունը կրթության որակի վրա,

- վերլուծել կրթական բարեփոխումների ընթացքն ու դրանց գործնական արդյունքները, գնահատել իրականացված քաղաքականությունների արդյունավետությունը և համապատասխանությունը ժամանակակից զարգացման պահանջներին,
- մշակել հանրակրթության կառավարման կատարելագործման և բարեփոխումների հիմնավորված ուղիներ, որոնք միաժամանակ ապահովում են ինքնավարություն, հաշվետվողականություն, արդյունավետություն և ներառականություն:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացությունների մասից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստի ծավալը կազմում է 150 էջ՝ առանց հավելվածի:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Հանրակրթության ոլորտի կառավարման տեսամեթոդական հիմքերը»** գլխում ներկայացվել են հանրակրթության դերն ու նշանակությունը հանրային կառավարման համակարգում, իրականացվել է հանրակրթության կառավարման միջազգային փորձի համեմատական վերլուծություն: Այս գլխում քննարկվել է հանրակրթության ոլորտի կառավարման նոր հայեցակարգային մոդելի կառուցման տեսակետը, դասական կառավարման մոդելները, հիմնավորվել է հանրակրթության ոլորտի կառավարման միջազգային առաջընթաց փորձի ուսումնասիրումը և հանրակրթական կառավարման մոդելների համապատասխանեցումը բնակչության ներհասարակական, սոցիալ-տնտեսական և մշակութային կարիքներին:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման արդի միտումները»** գլխում հեղինակը վերլուծել է ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև՝ ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման արդի հիմնախնդիրները, ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման առանձնահատկությունները, հանրակրթության կառավարման կառուցակարգերի և օրենսդրական դաշտի միջև առկա կառուցվածքային անհամապատասխանությունները: Մասնավորապես, վերհանվել են

համակարգային խզումները, ուղենշվել են հանրակրթական հաստատության կառավարման ոլորտի զարգացման միտումները, քննարկվել են ՀՀ հանրակրթական դպրոցներում կառավարման նոր մոդելին անցման հետ կապված իրավակարգավորումները, դպրոցի ֆինանսական, տնտեսական և վարչական գործառույթների կառավարման մոդելը, խաղորդների միջև պատասխանատվության բաշխումը և մի շարք այլ հիմնահարցեր:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման բարեփոխումների հնարավոր ուղիները»** գլխում հեղինակի կողմից ներկայացված են ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման բարեփոխումների ուղիները: Ներկայացնելու համար բարեփոխումների առկա արդյունքների լավարկման ուղիները, սույն հետազոտության շրջանակներում առաջարկվել է հանրակրթության կառավարման արդյունավետության նոր ցուցչային շրջանակ, մասնավորապես՝ մշակվել են կառավարման արդյունավետության 5 չափելի խմբեր, որոնք մինչ այսօր բացակայում էին ՀՀ հանրակրթության կառավարման վերլուծություններում՝ ինստիտուցիոնալ կայունություն, մասնակցային կառավարման աստիճան, ֆինանսական արդյունավետություն և ռացիոնալ բաշխում, ինքնավարություն–հաշվետվողականություն և հավասարակշռություն, կրթության որակի ու արդյունքների փոխկապակցում:

«**Եզրակացություններ**» բաժնում ներկայացվել են ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների, ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքները, ձևակերպվել են հիմնական եզրահանգումներն ու դրանցից բխող ատենախոսի առաջարկությունները:

Ատենախոսության արդյունքների հավաստիությունը և դրանց գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունը առանձինապես արժեքավոր է գիտական նորույթների կարևորության տեսանկյունից, որոնք մասնագիտական հիմնավորված են և դրանց կիրառման դեպքում էականորեն կարող են բարելավել ՀՀ հանրակրթության կառավարման որակը, ինչը կնպաստի ոլորտում արձանագրված արդյունքների բարելավման:

Հեղինակի կողմից վեր են անվել ՀՀ ԿԳՄՄ-ի համակարգում գործող կառավարման տարբեր մարմինների գործառույթների անհարկի կրկնությունները, որոնց հետևանքով միևնույն գործառույթը իրականացվում է նույն կառուցակարգի տարբեր օղակների կողմից, դրանով իսկ խառնաշփոթ առաջացնում կառավարման մեջ և դառնում դրա արդյունավետության նվազեցման պատճառներից մեկը:

Ակներև է նաև, որ հարակրթության գործընթացը հեղինակը ներկայացրել է որպես միակողմանի կառավարման օբյեկտ, որը պետք է զարգանա գրագետ կազմակերպման միջոցով և որպես հաջողության չափանիշ պետք է ընտրվեն գործընթացների արդյունավետության ցուցիչները:

Որպես աշխատանքի դրական կողմ անհրաժեշտ է առանձնացնել հեղինակի օգտագործած հարուստ և ամբողջական գրականության ցանկը: Հեղինակի կողմից օգտագործվել է 297 անվանում գրականություն, որից 67 անվանումը հայերեն, 180-ը անգլերեն և 48-ը ռուսերեն լեզվով են: Այսպիսի գրականության ընդգրկումը վկայում է այն մասին, որ հեղինակը տիրապետում է, ինչպես հանրապետության հանրակրթության ոլորտի կառավարման իրավական դաշտին և գործող ծրագրերին, այնպես էլ հարակրթության կառավարման առաջավոր փորձին և համաշխարհային զարգացումներին:

Հետազոտության մեջ կիրառվել են վիճակագրական դեսկրիպտիվ նկարագրության մեթոդը, համահարաբերակցային և հիմնական բաղադրիչների վերլուծությունները, հենքային տվյալները ներկայացված են 2008-2024 թվականներն ընդգրկող վիճակագրական ցուցանիշների միջոցով:

Հետազոտության արդյունքներն ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական արժեք՝ հնարավորություն տալով հանրակրթության կառավարման համակարգը դիտարկել ոչ թե միաչափ, այլ որպես բարդ ու բազմաստիճան ինստիտուցիոնալ կառուցվածք:

Ատենախոսության շրջանակներում ձեռք բերված արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ-ում հանրակրթության կառավարման քաղաքականության ձևավորման, դպրոցների կառավարման, մասնակցային կառավարման զարգացման, մարդկային ռեսուրսների կառավարման նոր մոտեցումների սահմանման ժամանակ: Արդյունքները ուսանելի են նաև միջազգային փորձի կիրառելիության և կրթության որակի գնահատման նոր գործիքների սահմանման տեսանկյուններից:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության գիտական նորույթը արտահայտվում է հետևյալ հիմնական դրույթներում.

- մշակվել է ՀՀ հանրակրթության կառավարման նոր հայեցակարգային մոդել, որը միավորում է պետական կառավարման ուղղահայաց համակարգը, դպրոցների ինստիտուցիոնալ ինքնավարությունը, համայնքային մասնակցային կառավարման բաղադրիչները և հանրային հաշվետվողականության գործիքները,

- բացահայտվել են հանրակրթության կառավարման կառուցակարգերի և օրենսդրական դաշտի միջև առկա կառուցվածքային անհամապատասխանությունները և պարզվել են այն համակարգային խզումները, որոնք արգելակում են դպրոցների ինքնավարությունը և նվազեցնում կառավարման արդյունավետությունը,
- մշակվել է հանրակրթության կառավարման արդյունավետության ցուցիչային շրջանակ, մշակվել են կառավարման արդյունավետության 5 չափելի խմբեր, որոնք են՝ ինստիտուցիոնալ կայունությունը, մասնակցային կառավարման աստիճանը, ֆինանսական արդյունավետությունը և ռացիոնալ բաշխումը, ինքնավարություն–հաշվետվողականությունը և հավասարակշռությունը, կրթության որակի ու արդյունքների փոխկապակցումը,
- ներկայացվել են ՀՀ հանրակրթության կառավարման բարեփոխումների նոր, համակարգային և տվյալահեն ուղղությունները՝ ռազմավարական բարեփոխումների ամբողջական փաթեթը, որը հիմնված է միջազգային համեմատական փորձի, ինստիտուցիոնալ վերլուծության, վիճակագրական տվյալների և կառավարման նորացված մոդելի վրա:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում տեղ են գտել որոշ բացթողումներ և թերություններ, որոնցից հիմնականներն են՝

1. Ատենախոսության էջ 64-ում (աղյուսակ 2.1.5) հեղինակը ներկայացրել է հանրապետության հանրակրթական ոչ պետական հաստատությունների թվային համամասնությունները: Համաձայն այդ տվյալների այդպիսի կարգավիճակ ունեցող դպրոցների քանակը 2018 թվականին կազմել է 46, իսկ 2024-ին՝ 49, որտեղ դպրոցների քանակը քաղաքներում համապատասխանաբար՝ 45 և 47, գյուղերում՝ 1 և 2: Համեմատության համար նշենք, որ հանրակրթական պետական հաստատությունների քանակը (աղյուսակ 2.1.4, էջ 63) ընդհանուր դպրոցների քանակում վերը նշված տվյալներով 2018թ.-ին և 2024թ.-ին կազմել է համապատասխանաբար 1363 և 1350, որից քաղաքներում՝ 504 և 491, գյուղերում 859 և 859: Հեղինակը «խփելով և' նալին և' մեխին» անփոփում է, որ մասնանավոր ուսումնական հաստատությունների առաջացումը ու տարածումը կարող է հանգեցնել հանրակրթության կառավարման ոլորտում հետևյալ բացասական երևույթների, մասնավորապես՝ «... մասնավոր ուսումնական հաստատությունները, ի թիվս կրթական նպատակների, կարող են շահույթ հետապնդել իրենց գործունեության ընթացքում: Բացի դրանից՝ մասնավոր ուսումնական

հաստատությունների տարածումը որոշ չափով ստվերում է պետական սեկտորի մասնագիտական ներուժը՝ առաջացնելով լավագույն ուսուցիչների արտահոսք պետական ուսումնական հաստատություններից: Այդ գործընթացները կարող են ուղեկցվել նաև պետական սեկտորում կրթության որակի միջինացմանն ու բարեփոխումների ոչ լիարժեք ու արմատական իրագործմանը, ինչն արդյունքում հղի է պետական ուսումնական հաստատությունների հանդեպ հասարակական բացասական արձագանքով և ոչ միայն կրթական, այլև դաստիարակչական հեռահար բացերով:»:

Կարծում ենք, որ հանրապետության ներսում միևնույն գործունեությամբ զբաղվող՝ սեփականության տարբեր ձևեր ունեցող կազմակերպությունների միջև կարիք չկա «սեպ խրել», այլ դրանք պետք է դիտարկել մրցակցության բնական պայմաններում, ինչի արդյունքում հնարավոր է ունենալ հիբրիդային մոդել, որը կմիավորի երկու տեսակի սուբյեկտների դրական կողմերն ու առավելությունները:

2. Կարծում ենք աշխատանքն ավելի կշահեր, եթե օգտագործվեին ավելի շատ վիճակագրական նյութեր (թեև հավելվածներ 1-12-ում կան ոլորտը բնութագրող և այն նկարագրող վիճակագրական տվյալներ, սակայն դրանք հեղինակի կողմից հիմնականում չեն արժանացել բավարար ուշադրության և վերլուծությունների:

3. Ատենախոսությանն էջ 73-ում բերված գծապատկերը 2.2.1-ը՝ «ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման համակարգի կառուցվածքը» հետաքրքիր կարող է լինել այդ կառույցվածքի արդյունավետության գնահատման վերաբերյալ հեղինակի մեկնաբանության տեսանկյունից, եթե տրվեր նաև գնահատական ներկայացված կառուցվածքի յուրաքանչյուր օղակի արդյունավետության չափանիշների վերաբերյալ:

4. Չնայած աշխատանքի տեքստում մեկում հսկայական է լայնածավալ աշխատանք է կատարված, սակայն այն համարժեք արտացոլում չի ստացել ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում, ինչը հավանաբար վերջնագծին հասնելու հեղինակի հոգնածության վկայությունն է:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներկայացված դիտողություններն ունեն խրախուսական բնույթ և բացասաբար չեն ազդում հետազոտության արդյունքների վրա: Մխիթար Ժորայի Գասպարյանի ատենախոսությունն ունի տեսամեթոդական և գիտագործնական նշանակություն, գիտական արժեք, ինքնուրույն հետազոտություն է, որի շրջանակներում հեղինակը լուծել է ատենախոսությունում դրված խնդիրները:

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 8 (ութ) գիտական հոդվածներում, դրանք ներառված են սեղմագրում:

Առաքված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Մխիթար Ժորայի Գասպարյանի «ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման հիմնախնդիրները և բարելավման ուղիները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր Ա.Խ.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ
ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՀՊՏՀ գիտական քարտուղար Ն.Հ.ԴԱՐԲԻՆՅԱՆ

18 մարտի 2026թ.